ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

«***Պետության և իրավունքի հիմունքներ***»
առարկայից դպրոցականների օլիմպիադայի
ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (2024 թ.)

Կրթական կազմակերպությունը_____
_____

Ազգանուն _____
Անուն _____
Հայրանուն _____

Սիրելի աշակերտնե՛ր,

Գրավոր աշխատանքները բաղկացած են հետևյալ առաջադրանքներից (գնահատման ձևերը և միավորները տրված են հենց աշխատանքում)՝

1. *Ընտրովի պատասխանով առաջադրանքներ՝ 1.1.-1.8. (ընդամենը 4 միավոր):*

2. *Համապատասխանեցման առաջադրանքներ՝ 1-5. (ընդամենը 5 միավոր):*

3. *Կառուցված պատասխանով առաջադրանքներ՝ 1- 4. (ընդամենը 4 միավոր):*

4. *Գծապատկերի լրացում (3 միավոր):*

5. *Շարադրանք (4 միավոր):*

Աշխատանքի ընդհանուր միավորային արժեքն է՝ 20:

1. Նշեք ճիշտ պատասխանը՝ ընդգծելով (յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0.5 միավոր).

1.1. Ստորև ներկայացված բնորոշումներից ո՞րն է ամրագրված ՀՀ Սահմանադրությամբ.

ա) Հայաստանի Հանրապետությունում ինքնիշխանությունը պատկանում է ժողովրդին,

բ) Հայաստանի Հանրապետությունում ինքնիշխանության կրողը ժողովուրդն է,

գ) Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

1.2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ.

ա) որոնց համար լիազորված են օրենքներով,

բ) որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով,

գ) որոնք արգելված չեն Սահմանադրությամբ կամ օրենքներով:

1.3. Ստորև նշվածներից ո՞րն է հետևյալ մտքի շարունակությունը. «ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ...».

ա) միայն իրավունք է, բայց ոչ պարտականություն,

բ) միայն ընտրական իրավունք է,

գ) ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն:

1.4. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ.

ա) բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով,

բ) բարիդրացիական, փոխշահավետ և դաշնակցային հարաբերություններ հաստատելու նպատակով,

գ) փոխշահավետ և դաշնակցային հարաբերություններ հաստատելու նպատակով:

1.5. Ստորև թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտացոլում ժողովրդաիշխանության իրականացման ձևերը.

ա) ներկայացուցչական, անուղղակի ժողովրդաիշխանություն,

բ) անմիջական, ուղղակի ժողովրդաիշխանություն,

գ) ներկայացուցչական և անմիջական ժողովրդաիշխանություն:

1.6. Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերն են.

ա) Հայաստանի Հանրապետության դրոշը, զինանշանը, օրհներգը և Սահմանադրությունը,

բ) Հայաստանի Հանրապետության դրոշը, զինանշանը, օրհներգը և մայրաքաղաքը,

գ) Հայաստանի Հանրապետության դրոշը, զինանշանը և օրհներգը:

1.7. Ստորև բերված դատողություններից որ՞ն է բնութագրում ընտրությունների ազատության սկզբունքը.

ա) ընտրական հանձնաժողովներն անկախ են պետական մարմիններից,

բ) ընտրությունները պարտադիր են և պարբերական,

գ) ընտրողն ինքն է իր հայեցողությամբ կատարում ընտրությունը:

1.8. Օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն.

ա), Ազգային ժողովի պատգամավորները և Կառավարությունը,

բ) Ազգային ժողովի պատգամավորները, Ազգային ժողովի խմբակցությունը և Կառավարությունը,

գ) Ազգային ժողովի պատգամավորները, Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները և Կառավարությունը:

2. Համապատասխանեցրեք ստորև բերվող հասկացությունները դրանց նկարագրությունների կամ սահմանումների հետ (յուրաքանչյուր ճիշտ համապատասխանեցում գնահատվում է 1 միավոր).

ա) Պարտադիր կամ հարկադիր աշխատանքն արգելվում է	1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:
բ) Մարդու ազատ գործելու իրավունքը	2. Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:
գ) Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը	3. Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:
դ) Անմեղության կանխավարկածի իրավունքը	4. Ոչ ոք չի կարող իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի:
ե) Օրինականության սահմանադրական սկզբունքը	5. Յուրաքանչյուր ոք ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին:

«ե»	«դ»	«ա»	«գ»	«բ»
1	2	3	4	5

3. Լրացրեք բաց թողած բառերը (յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր):

3.1. Կառավարությունը կազմված է վարչապետից, փոխվարչապետերից և նախարարներից:

3.2. Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է:

3.3. Օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:

3.4. Ընտրությունները ժողովրդի իշխանության դրսևորման անմիջական բարձրագույն ձևն են, որի միջոցով ժողովուրդն ուղղակիորեն մասնակցում է պետության կառավարմանը՝ ձևավորելով Ազգային ժողովը և տեղական ինքնակառավարման մարմինները:

4. Ստորև բերված աղյուսակում լրացրեք իրավական պետության հիմնական սկզբունքները: Միայն մեկ ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, երկու ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր, երեքը՝ 3 միավոր:

Իրավական պետության հիմնական սկզբունքները		
Մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անբակտելի հիմքն է	Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք	Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

5. Շարադրեք ժողովրդավարական ընտրությունների սկզբունքները հետևյալ սխեմայով՝ համընդհանուր ընտրություններ (1 միավոր), հավասար ընտրական իրավունք (1 միավոր), ուղղակի ընտրություններ (1 միավոր), գաղտնի քվեարկություն (1 միավոր):

Համընդհանուր ընտրություններ՝ Ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Հավասար ընտրական իրավունք՝ 1. Ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով: Յուրաքանչյուր ընտրող ունի միայն մեկ ձայն: Հանրային իշխանությունները հավասար պայմաններ են ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար: Ընտրողները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն:

Ուղղակի ընտրություններ՝ Ազգային ժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ համայնքների ավագանիների կողմից ընտրվող համայնքների ղեկավարների, ընտրվում են անմիջականորեն՝ ընտրողների կողմից:

Գաղտնի քվեարկություն՝ Քվեարկությունը գաղտնի է: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
Պետության և իրավունքի տեսության ու պատմության
ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Գևորգ Դանիելյան**